խանաց այդ միայն հարկաւոր էր, որ 'ի Թաթարաց որբեալ աշխարհքը նորէն շէննայ, ուստի կը շնորհէն Հայոց մեծամեծ արտօնութիւններ։ Գէորգ Կորիաթովիչ իշխանին Կամենիցեաց տուած պարգեւագրին ներքոյ՝ Հայոց անուններ կան[1]*։ Այլ հաւանական է՝ որ այդ հայկազունք առաջի գաղթականացմէ լինին։ Հայք ինչպէս 'ի Ղրիմ. նոյնպէս և 'ի Կամենից կը զօրանան կը բազմանան, կը լնուն քաղաքը մեծամեծ շէնքերով, կ'ամրացընեն բերդերով, ազգային առանձին դատաստանով. իսկ վաճառականութեամբ ոչ թէ միայն Կամենից քաղաքին, այլ բոլոր բովանդակ Փոդոլիոյ և անդր եւս քան զՓոդոլիա կը տիրեն։*

Երբ Փոդոլիա Լեհաց իշխանութեան ձեռք կ'անցնի, Հայոց առաջին գործը կը լինի՝ իրենց արդէն ստացած առանձնաշնորհութիւնքը վաւերացընել տալ Լեհ թագաւորաց. որոց առաջինն կը լինի Վլադիսլաւ Եագելլոյ։ Լաւրենտիոս Մարչինսքի[2] *16 Լեհ արքայից ստորագրութիւնք կը հաշուէ, Հայոց զանազան ժամանակ տրուած արտօնութեանց ներքոյ։*

Ա. 1496ին խնդրած են Հայք Լեհաց Յովհաննէս Ալբերտոս թագաւորէն հաստատութիւն ազգային առանձնաշնորհութեանց. արքայն՝ 'ի նկատի ունենալով որ Կամենից սահմանածայր քաղաք է և շատ անգամ զրկանք կրած 'ի թշնամեաց, կը հաստատէ Հայոց արտօնութիւնքը, և կը հրամայէ՝ որ Հայք 'ի մեծի և 'ի փոքու՝ ազգային դատաս-

1. Հայք 'ի Փոդոլիա, Գորոնովիչ ռուս երիցու։

2. Աշխարհագրական, Տեղագրական և Պատմական տեղեկութիւնք կոչուած գրքին մէջ։